



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 4

ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝

2016 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. Հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությունը:
2. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էր Երևանի պետական համալսարանի ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Սիմոնյանը:

Սկսելով գիտխորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը իր խոսքի սկզբում տեղեկացրեց, որ գիտխորհրդի 25 անդամներից այս պահին նիստին մասնակցում է 23-ը, ապահովված է անհրաժեշտ քվորումը: Այնուհետև առաջարկ եղավ գիտխորհրդի նիստը վարող նախագահ ընտրել ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ դոց. Վ. Պետրոսյանին: Վերջինս տարեկան հաշվետվության համար ձայնը տվեց հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանին:

Ֆակուլտետի դեկանը հանգամանալից անդրադարձավ ուսումնական գործընթացին /ուսումնական ծրագրեր, առարկայական ծրագրերի նորացում, դասավանդման մեթոդի-

կայի կատարելագործում, եռաստիճան ուսուցման խնդիրների հետ կապված աշխատանքների հստակեցում.../:

Նա մասնավորապես նկատեց.

«Հաշվետու ժամանակաշրջանը ընդգրկում է 2015-ի նոյեմբերից 2016-ի նոյեմբերը:

Ֆակուլտետում կազմակերպվել են գիտական բազմաթիվ նստաշրջաններ: Ֆակուլտետը սերտ համագործակցության մեջ է ՀՀ ԳԱԱ-ի հասարակագիտական բաժանմունքի, գրականության և լեզվի ինստիտուտների, գրողների միության, Մատենադարանի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հետ: Ֆակուլտետում ակտիվորեն գործել են ուսանողական խորհուրդը և ուսանողական գիտական ընկերությունը:

Ֆակուլտետում տեղադրվեցին ակադեմիկոսներ Արսեն Տերտերյանի, Հրանտ Թամրազյանի և Էդվարդ Ջրբաշյանի կիսանդրիները:

Այժմ ամբիոնների աշխատանքների մասին:

Հայոց լեզվի ամբիոնի գիտական հետաքրքրությունները բազմազան են, բայց շատ որոշակի՝ արդի հայերենի կանոնարկման հարցեր, արևելահայերենի և արևմտահայերենի առնչություններ, թարգմանչական գործ, հաղորդակցման և խոսքի մշակույթի արդիական հիմնախնդիրներ են: Այս ուսումնական տարում ամբիոնը հրատարակել է տասը գիրք, որոնցից երկուսը՝ հայոց լեզվի պատմության ամբիոնի և Համազգային հայ կրթական և մշակութային միության հետ համատեղ.

- բուհական մեկ դասագիրք՝ «Հայոց լեզու և խոսքի մշակույթ»՝ երաշխավորված ՀՀ ԿԳ նախարարության կողմից (հեղինակային խումբ),
- երեք մենագրություն՝ Լեոնիդ Թեյլան՝ «Արդի հայերենի քերականության հարցեր», Լևոն Ավետիսյան՝ «Արհեստավորանիշ անվանումները հայերենում», Յուրի Ավետիսյան՝ «Գրական հայերենի զարգացման երկու շրջափուլերը՝ գրաբար և աշխարհաբար»,
- գործնական աշխատանքների երեք և մեթոդական մեկ ձեռնարկ՝ «Հայոց լեզու և խոսքի մշակույթ». հումանիտար ֆակուլտետների ուսանողների համար, հեղինակային խումբ, «Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքներ. ձևաբանություն», հեղինակային խումբ, «Հայոց լեզու և խոսքի մշակույթ գործնական աշխատանքների ձեռնարկ բնագիտա-

կան ֆակուլտետների ուսանողների համար» (հեղինակային խումբ), «Խոսքիմասային տեղաշարժերն արդի հայերենում», հեղ.՝ Ջարիկ Աղաջանյան,

• գիտաժողովի երկու զեկուցումներ՝ «Արդի հայերենի զարգացման հիմնախնդիրներ» և «Արեղյանական ընթերցումներ»:

Տպագրության են երաշխավորվել մեկ մենագրություն (հեղ.՝ Թ. Տոնոյան), մեկ բառարան (հեղ.՝ Ջ. Աղաջանյան) և բուհական մեկ դասագիրք՝ պրոֆ. Ա. Սուքիասյանի դասագրքի լրամշակված տարբերակը (համահեղինակներ՝ Քնարիկ Սուքիասյան, Մանուկ Ֆելեքյան):

Դոկտորական ատենախոսություն է պաշտպանել ամբիոնի դասախոս Հակոբ Չոլաքյանը:

Պաշտպանության է երաշխավորվել թեկնածուական 2 ատենախոսություն:

Ամբիոնի դասախոսները մասնակցել են համալսարանական և հանրապետական գիտաժողովների, տպագրել են երեք տասնյակից ավելի գիտական հոդված:

Դուբայի Ազգային Օհաննեսյան միօրյա վարժարանում Հայերենի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներին բանախոսությամբ հանդես է եկել Հակոբ Չոլաքյանը:

Ամբիոնը հետամուտ է Հայերենի բարձրագույն խորհրդի վերագործարկմանը և պարբերաբար մասնակցում է տարբեր մակարդակներում ընթացող քննարկումներին և հեռուստաբանավեճերին:

Ամբիոնի նախաձեռնությամբ ֆակուլտետի 2-րդ կուրսից գործարկվում է նոր մասնագիտացում՝ «Թարգմանչական գործ»:

Ամբիոնն ունի առկա ուսուցման մեկ և հեռակա ուսուցման երեք ասպիրանտ:

Պարբերաբար թարմացվում և արդիականացվում են մագիստրոսական ծրագրերը. մասնավորապես ավելացվել են թարգմանչական գործին վերաբերող դասընթացները, որոնք դասավանդում են նաև հրավիրված դասախոսներ:

Ամբիոնը երեք տարի շարունակ ապահովում է մագիստրոսական ծրագրի իրականացման համար նախատեսված ուսանողների անհրաժեշտ քանակը:

Ակադեմիկոս Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնը 2015-2016 ուստարում շարունակել է իր գիտական գործունեությունը թե՛ հայ հին և միջնադարյան, թե՛ հայ նոր գրականության ուղղություններով: Ամբիոնի աշխատակիցները եռանդով մասնակցել են Հայոց ցեղասպանության 100-ամյակի միջոցառումներին, ինչպես

նան հանրապետության գիտամշակութային ու գրական կյանքին, համալսարանական, հանրապետական ու միջազգային գիտական բազմաթիվ նստաշրջանների և հրապարակային բանախոսությունների՝ այդ թվում նաև արտասահմանյան երկրներում կազմակերպված: Ամբիոնի դասախոս Բ. Գ. Թ., դոցենտ Հ. Համբարձումյանը մասնակցել է ԱՄՆ-ում Անն Արբոր քաղաքում կայացած Միչիգանի համալսարանի հայագիտական ծրագրի տարեկան գիտաժողովին:

Բ. Գ. Դ., պրոֆեսոր Վ. Սաֆարյանը տպագրության է հանձնել իր՝ «Հայ հին և միջնադարյան գրականություն» բուհական դասագիրքը: Ամբիոնի դասախոս Բ. Գ. Թ., դոցենտ Հ. Համբարձումյանը հայերեն է թարգմանել Մագդալինա Ջանփոլադյանի «Սասունցի Դավթի ռուսական կյանքը» գիրքը: Ընդհանուր առմամբ հայ գրականության պատմության պրոֆեսորադասախոսական անձնակազմը հաշվետու շրջանում հրատարակել էրեք տասնյակից ավելի գիտական հոդվածներ և մի քանի մենագրություններ:

Հայոց լեզվի պատմության ամբիոնի աշխատակիցները հաշվետու տարում զբաղվել են գրաբարի, միջին հայերենի, բարբառագիտության, հայոց լեզվի պատմության հիմնահարցերի ուսումնասիրությամբ և այդ գիտակարգերին վերաբերող դասընթացների մշակմամբ ու կատարելագործմամբ, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքով:

Ամբիոնն ունի մեկ առկա ասպիրանտ, մեկ՝ հեռակա և երկու հայցորդ:

Հայոց լեզվի պատմության ամբիոնի բոլոր դասախոսները բարեհաջող ավարտել են դասախոսների որակավորման բարձրացման առաջին հնգամյակը:

Ամբիոնի դասախոսների մեծ մասը ղեկավարել է ՈւԳԸ զեկուցումներ, վարել նիստեր: Մի քանիսը դասախոսություններով հանդես են եկել հանրապետության տարբեր դպրոցներում, մասնակցել ԵՊՀ-ի կազմակերպած աշակերտական օլիմպիադային:

Ամբիոնի նախաձեռնությամբ ստեղծվել է Գրաբարագետների ակումբ, որում ընդգրկված են ուսանողներ տարբեր ֆակուլտետներից:

2015-2016 ուստարում ամբիոնի դասախոսները հանրապետության տարբեր հանդեսներում հրատարակել են գիտական 30 հոդված, 3 թեզիս և 1 մենագրություն:

2015 թ. ղեկտեմբերին կազմակերպվել է հ. լ. պատմության ամբիոնի 30-ամյակին նվիրված գիտական միջոցառում, զեկուցումներով հանդես է եկել ամբիոնի դասախոսների

մեծ մասը՝ ներկայացնելով ամբիոնի անցած բեղմնավոր ուղին: Հոբելյանը եզրափակվեց դոց. Ա. Յուզբաշյանի ջանքերով կազմակերպած «Միրեցեք զմիմեանս» բեմադրությամբ:

2016թ. ապրիլին ամբիոնը կազմակերպել է վաստակաշատ գիտնական, ամբիոնի նախկին վարիչ Մանվել Ասատրյանի ծննդյան 90-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջան, որտեղ զեկուցումներով հանդես են եկել հայոց լեզվի պատմության ամբիոնի դասախոսներից շատերը /Աբաջյան, Յուզբաշյան, Դիլբարյան, Պողոսյան, Գրիգորյան, Մուրադյան/, ասպիրանտներ Թ. Պողոսյանը և Վ. Բաղմանյանը:

Հաշվետու շրջանում **ընդհանուր լեզվաբանության ամբիոնի** դասախոսները՝

1) գիտական տարբեր հանդեսներում և գիտաժողովների զեկուցումների ժողովածուներում հրատարակել են 22 (քսաներկու) հոդված (Վ. Պետրոսյան՝ 6, Լ. Հովսեփյան՝ 1, Ա. Աբրահամյան՝ 5, Ս. Ավետյան՝ 5, Գ. Մկրտչյան՝ 5):

2) մասնակցել են միջազգային և հանրապետական գիտաժողովների՝ ներկայացնելով 7 (յոթ) զեկուցում (Վ. Պետրոսյան՝ 1, Լ. Հովսեփյան՝ 1, Ա. Աբրահամյան՝ 2, Ս. Ավետյան՝ 1, Գ. Մկրտչյան՝ 3):

3) հրատարակել են 1 (մեկ) ուսումնամեթոդական ձեռնարկ (Նելլի Մկրտչյան, Ա. Հայրապետյան, Լատիներենի ձեռնարկ, Ե., 2016 թ)

Ամբիոնի նախաձեռնությամբ և Վ. Պետրոսյանի առաջաբանով վերահրատարակվել է ակադ. Գ. Բ. Ջահուկյանի «Լեզվաբանության պատմություն» մեծարժեք մենագրությունը:

Ամբիոնի դասախոսները տարբեր դասընթացներ են վարում (լեզվաբանության հիմունքներ, ընդհանուր լեզվաբանություն, համեմատական քերականություն, հ.-ե. լեզուների համեմատական քերականություն, լատիներեն, հին հունարեն, լեզվաբանական տիպաբանություն, իմաստաբանական արդի ուսմունքներ և այլն) ԵՊՀ 6 ֆակուլտետների բակալավրատում և մագիստրատուրայում (հայ բանասիրության, ո/գ բանասիրության, արևելագիտության, աստվածաբանության, քիմիայի և կենսաբանության), ինչպես նաև ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում (Գ. Մկրտչյան): Ըստ ուսանողական սոցիալարցման տվյալների՝ ամբիոնի դասախոսական կազմի միջին գնահատականը 4 միավորից բարձր է, որը վկայում է նրա անդամների մասնագիտական պրոֆեսիոնալիզմի մասին: Ինչպես երևում է նաև տպա-

գրված աշխատանքների ցանկից, ամբիոնի դասախոսների մի մասը, մանկավարժական աշխատանքին զուգահեռ, գործուն կերպով զբաղվում է նաև գիտությամբ:

Հայ նորագույն գրականության ամբիոնի աշխատակիցները ուսումնական գործընթացին զուգահեռ շարունակել են նաև գիտահետազոտական աշխատանքները, հրատարակել հոդվածներ, մասնակցել արտասահմանում կազմակերպված գիտաժողովների և միջոցառումների, ակնարկային դասախոսություններ կարդացել Երևանի և տարբեր մարզերի դպրոցներում, ունեցել հեռուստատելույթներ:

Պրոֆ. Ա. Ավագյանը կազմել և հրատարակել է «Հայոց եղեռնապատումի պոեզիա» (2015) ժողովածուն: Լույս է տեսել պրոֆ. Կ. Աղաբեկյանի «Հոդվածներ» ժողովածուն (2016): Վերահրատարակվել է պրոֆ. Վազգեն Գաբրիելյանի «Միյուռքահայ գրականություն» բուհական դասագիրքը (2016):

Տպագրվել է «Հայոց եղեռնապատումի գրականությունը» ժողովածուն, որի մեջ հոդվածներ ունեն ամբիոնի անդամներ Վ. Գաբրիելյանը, Ս. Գրիգորյանը, Ա. Ավագյանը, Ա. Արզումանյանը:

Ամբիոնը կազմակերպել և մայիսի 12-ին անցկացրել է «Մաթևոսյանական ընթերցումներ» երրորդ գիտական նստաշրջանը, որի ընթացքում զեկուցումներով հանդես են եկել ամբիոնի անդամներ Վ. Գաբրիելյանը, Ս. Գրիգորյանը, Ա. Արզումանյանը, Վ. Դանիելյանը, Ս. Դվոյանը, Ս. Ղազարյանը: Գիտաժողովին հրավիրվել և մասնակցել են նաև ԵՊՀ և հանրապետության մի շարք գիտնականներ: Նստաշրջանի նյութերի հիման վրա պրոֆ. Վ. Գաբրիելյանի խմբագրությամբ կազմվել է «Մաթևոսյանական ընթերցումներ» երրորդ ժողովածուն, որը շուտով կտպագրի ԵՊՀ հրատարակչությունը:

Ամբիոնի ասիստենտ Սևակ Ղազարյանի աշխատասիրությամբ լույս է տեսել Պարույր Սևակի գրականագիտական անտիպ աշխատությունների ժողովածուն (2016թ.):

Ամբիոնի անդամներ Ս. Դվոյանը, Վ. Դանիելյանը, Ս. Ղազարյանը արտերկրում մասնակցել են միջազգային գիտաժողովների՝ հանդես գալով զեկուցումներով. Ս. Դվոյանը՝ Ստոկհոլմում, Վ. Դանիելյանը՝ Միչիգանում, Ս. Ղազարյանը՝ Բեյրութում:

Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնում 2015-2016 թթ. հաշվետու ժամանակաշրջանում թարմացվել և արդիականացվել են մագիստրոսական դասըն-

թացների ծրագրերը՝ հարմարեցնելով ժամանակակից գրականագիտության պահանջներին: Ամբիոնի դասախոսները վերջին տարվա ընթացքում տպագրել են գիտական շուրջ տասնհինգ հոդված: Լույս են տեսել Ժ. Քալանթարյանի «Դիտանկյուն», Ա. Բեքմեզյանի «Տոհամիջյան ընթերցումներ» հոդվածների և ուսումնասիրությունների ժողովածուները, որոնք ամփոփում են հեղինակների տարբեր տարիների գիտական աշխատանքները: Թարգմանվել և լույս է տեսել Մ. Ջանփոլադյանի «Սասունցի Դավթի ռուսական կյանքը» մենագրությունը:

Հոկտեմբեր ամսվա սկզբին տպագրվեց ամբիոնի դասախոսների շուրջ հինգ տարվա գիտական աշխատանքի արդյունքը՝ «Գրականության տեսության արդի խնդիրներ» ուսումնական ձեռնարկը՝ նախատեսված մագիստրոսական բաժնի ուսանողների, գրականագետների, գրականությամբ հետաքրքրվող լայն շրջանակների համար:

Թարգմանվում է ժամանակակից ռուս գրականագետ Օլգա Տուրիշևայի «Արտասահմանյան գրականագիտության տեսությունը և մեթոդաբանությունը» աշխատությունը, որը շուտով կհանձնվի տպագրության:

Ամբիոնի անդամները շարունակաբար հանդես են գալիս հանրապետական և ֆակուլտետային գիտաժողովներում: Պրոֆ. Մ. Ջանփոլադյանը մասնակցել է «Բրյուսովյան ընթերցումներ» գիտաժողովին «Բրյուսովի քննադատական գնահատականները հայ պոեզիայի վերաբերյալ. մեկ դար անց» զեկուցմամբ, նաև հեռակա մասնակցություն է ունեցել Մոսկվայի Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտի միջազգային գիտաժողովին «Սերգեյ Եսենինը Լևոն Մկրտչյանի հրապարակումներում» թեմայով:

Ամբիոնի դասախոսների աշխատանքը չի սահմանափակվում միայն դասերով ու գիտական գործունեությամբ: Պրոֆ. Ժ. Քալանթարյանը ՀՀ ԲՈՀ-ի՝ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում գործող գրականագիտության խորհրդի նախագահն է, Մ. Ջանփոլադյանը և Ա. Ջրբաշյանը՝ նույն խորհրդի անդամները: Ամբիոնի անդամները ասպիրանտներ և հայցորդներ են ղեկավարում ոչ միայն համալսարանում, այլև Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում:

Ամբիոնն ունի չորս ասպիրանտ (երկուսը՝ առկա, երկուսը՝ հեռակա), որոնք ներգրավված են ամբիոնական աշխատանքներում: Ամբիոնի աշխատանքի արդյունքներն արտացոլ-

ված են սոցիալարցման տարեկան բարձր արդյունքներում: Անկախության 25-ամյակի առիթով պրոֆ. Ժ. Քալանթարյանը ստացել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի կոչում:

Մանկավարժության ամբիոնն իրականացնում է կրթական երեք ծրագիր՝ մեկը՝ բակալավրիատում՝ «Սոցիալական մանկավարժություն», երկուսը՝ մագիստրատուրայում՝ «Կրթության կազմակերպում» /առկա և հեռակա ուսուցմամբ/, և «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» /հեռակա/: Վերջինս բացվել է 2016-2017 ուստարում: Ուսուցման ձևը՝ հեռակա, տևողությունը՝ 1.5 տարի: Տրվում է մանկավարժի որակավորում:

Մանկավարժության ամբիոնն աշխատում է համալսարանի 12 ֆակուլտետում՝ նրանց բազային կրթական ծրագրում իրականացնելով մանկավարժական կրթաբլոկ՝ մանկավարժության դասընթաց, մանկավարժական պրակտիկա:

Մանկավարժության ամբիոնը հաշվետու տարում տպագրության է հանձնել «Մանկավարժական բառարանը»: Ավարտվել և խմբագրման փուլում է «Սոցիալական մանկավարժություն» բուհական ձեռնարկը: Տպագրվել է «ԵՊՀ մանկավարժության ամբիոնի 95-ամյա անցած ուղին» խորագրով գիրքը: Տպագրվել է նաև 15 գիտական հոդված:

Ամբիոնում սովորում է 4 հայցորդ և 2 ասպիրանտ Հայաստանից, 2 ասպիրանտ՝ Իրանից:

Հաշվետու տարում ամբիոնում պաշտպանվել է 4 թեկնածուական ատենախոսություն:

Ամբիոնին կից գործում է ԲՈՀ-ի գիտական աստիճաններ շնորհող մանկավարժության 065 մասնագիտական խորհուրդը / 01 և 02 թվանիշներով/: 2015 թվականի հոկտեմբերից մինչև 2016 թվականի հոկտեմբերն ընկած ժամանակահատվածում խորհրդում կազմակերպվել է թեկնածուական 11 ատենախոսության պաշտպանություն:

2016 թվականի՝ հոկտեմբերի 12-ին մանկավարժության ամբիոնը մեծ շուքով նշեց հիմնադրման 95-ամյակը՝ կազմակերպելով հոբելյանական միջոցառումների շարք. Մանկավարժության կաբինետի անվանակոչության արարողություն՝ պրոֆեսոր Գուրգեն Էդիլյանի անունով, և հոբելյանական հանդիսավոր նիստ՝ նվիրված ամբիոնի հիմնադրման 95-ամյակին:

2016 թ. մայիսին ԵՊՀ-ի և Մոսկվային մանկավարժական պետական համալսարանի /ՄՄՊՀ/ միջև կնքված միջբուհական համագործակցության շրջանակներում մանկավարժության ամբիոնը համագործակցության կոնկրետ առաջարկությունների մեծ փաթեթ է ներկայացրել Մոսկվային մանկավարժական պետական համալսարանի /ՄՄՊՀ/ մանկավարժության ֆակուլտետի և նրա կազմում եղած մանկավարժության ամբիոններին:

Մանկավարժության ամբիոնը Եվրոպական կրթական հետազոտությունների ասոցիացիայի անդամ է: Ստացել է Գերմանիայի և Բուլղարիայի հետ համատեղ գիտահետազոտական աշխատանքներ կատարելու առաջարկ:

Ամբիոնի Սոցիալական մանկավարժություն և Կրթության կազմակերպում բաժինների ուսանողներն ակտիվ մասնակցում են ֆակուլտետի, համալսարանի և միջբուհական ՈՒԳԸ-ի աշխատանքներին: Նրանցից շատերի ելույթներն ընդգրկվել են լավագույների շարքում և տպագրվել որպես հոդված:

Ամեն տարի՝ հոկտեմբերի 2-ին, որպես ավանդույթ, սոցիալական մանկավարժության բաժնի ուսանողներն ամբիոնի դասախոսների հետ միասին նշում են սոցիալական մանկավարժի միջազգային օրը՝ կազմակերպելով «Ես սոցիալական մանկավարժ եմ» միջոցառումը, որի ժամանակ տեղի է ունենում առաջին կուրսեցիների երդման արարողությունը:

Ամբիոնի ուսանողներն ընդգրկված են հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի կազմում՝ դրանով իրենց մասնակցությունը բերելով ֆակուլտետի կառավարման գործընթացին»:

Ելույթ ունեցող ամբիոնի վարիչներն ու գիտխորհրդի մյուս անդամները /Ն. Հարությունյան, Վ. Գաբրիելյան, Յու. Ավետիսյան, Վ. Պետրոսյան.../ բարձր գնահատեցին հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի՝ հաշվետու ժամանակաշրջանում կատարած բեղմնավոր աշխատանքն ու իրենց շնորհակալությունը հայտնեցին ֆակուլտետում տիրող բարոյա հոգեբանական առողջ մթնոլորտի և ուսումնական գործունեացի կատարելագործման համար:

Նիստն ամփոփեց համալսարանի ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Սիմոնյանը: Նա հիմնականում գոհունակություն հայտնեց հայ բանասիրության ֆակուլտե-

տում ծավալված գիտաուսումնական աշխատանքների և առաջընթացի համար, շնորհակալություն հայտնեց պրոֆ. Ա. Ավագյանին: Համալսարանի ռեկտորը, սակայն, ընդգծեց, որ անհրաժեշտ է համառ աշխատասիրությամբ ու ինքնանվիրումով հասնել նոր նվաճումների, վերացնել առկա որոշ թերացումները: Իսկ ինչ վերաբերում է դեկանի մատնանշած՝ ֆակուլտետում երբեմն ծագող մանր-մունր դժվարություններին /օտարերկրյա գիտական ամսագրերի և հանդեսների տրամադրում և այլն/, սիրով կուսումնասիրվեն ու անհրաժեշտ լուծումներ կտրվեն:

Նիստը համարվեց ավարտված:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ